ԶՎԱՐԹՆՈ՞ՑԸ, ԹԵ՞ ՆՈՐԱՁԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարտի 31-ին հանդիսավոր պայմաններում, համապատասխան արձանագրությամբ քար կանգնեցվեց այն տեղում, որտեղ կառուցվելու է մայրաքաղաք Երևանի գլխավոր՝ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։

Դեռևս ճշտված չէ, թե ինչպիսին կլինի այն, ինչ նախագծով կկառուցվի։ Անցյալ տարվա սկզբում Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից որոշված էր նոր կառույցով կրկնել հայ ճարտարապետության չգերազանցված կոթողը՝ հռչակավոր Զվարթնոցը։ Վեհափառի իսկ հանձնարարությամբ վերականգնման նախագիծը հոգևոր խորհրդի ճարտարապետական-շինարարական բաժնում արժանացավ հավանության։ Հանձնարարված էր նաև նույն հորինվածքի սահմաններում հարմարություններ ստեղծել տաճարի սպասավորների համար, որը և արվեց։ Այդ որոշումը, սակայն, չէր համապատասխանել որոշ պաշտոնյաների ըմբռնումներին։ Ինչու՞ կրկնել, երբ կարելի է նոր նախագիծ կազմել, որ լինի մոդեռն՝ որոշ չափով, հայկականի խառնուրդով։ Մասնագետները այդպիսի «ոճն» անվանում են էկլեկտիկ։ Հայ ճարտարապետությունն ունի իր հիանալի ավանդույթները, հարյուրամյակների ընթացքում մշակվել, բյուրեղացել է հայկական ոճը, դասականորեն պարզ ու անպաճույճ՝ կրելով լուսավոր բովանդակություն, վեհացնող հորինվածք, կառուցողական հմուտ վարպետություն։ Հայկական հուշարձանները իրենց աստվածային բարեմասնություններով գրավել են նաև օտարին և որոշակի վերափոխություններով կրկնվել աշխարհի տարբեր կողմերում։ Մենք կարող էինք դեռևս կես տարի առաջ կամ հենց հիմա Զվարթնոցի նախագծով անմիջապես սկսել շինարարությունը։ Մինչդեռ այժմ ծրագիր է մշակվում նախագծման մրցույթ հայտարարել։ Թե ինչ կշահենք դրանով, հայտնի չէ, սակայն պարզ է, որ կկորցնենք շատ բան և ամենակարևորը՝ ժամանակ։

Զվարթնոցը վերականգնելու, կրկնելու գաղափարը նոր չէ։ Հայտնի պիտի լինի, որ դեռևս 1944 թ. Էջմիածնի կաթողիկոսական տեղապահ (հետագայում կաթողիկոս),

արժանահիշատակ Գևորգ Չորեքչյանի ջանքերով միութենական կառավարության նախագահի ստորագրությամբ որոշում կայացվեց Զվարթնոցի ամբողջական վերականգնման վերաբերյալ։

Ավելի ուշ եղել են այլ որոշումներ ևս։ Զվարթնոցի ավերակի հարևանությամբ այն որպես հուշարձան վերականգնելը մեր պայմաններում հնարավոր չէ. շտապ օգնության կարիք զգացող հազարավոր հուշարձաններ ունենք։ Միակ իրական հնարավորությունը Զվարթնոցը Երևանում կառուցելն է, որովհետև նրա ճարտարապետությունը չափանշային առումով նույնպես մայրաքաղաքային է։ Մի ուրիշ տեղ կառուցելու սպասելիքները բացառվում են։

Երևանում կառուցելով Զվարթնոցը, միանգամից երեք բան ենք շահում. նախ՝ վերականգնում ենք մեր ժողովրդի 7-րդ դարում իրականացված հանճարեղ ստեղծագործությունը։ Ապա՝ օգտագործում ենք նրա կիրառական հնարավորությունը իր իսկական նշանակությամբ, որպես գործող եկեղեցի։ Եվ երրորդ՝ մեր մայրաքաղաքը ձեռք է բերում քաղաքային տարածական հորինվածքի յուրօրինակ ուրվագիծ, որպիսին քիչ ունի այժմ։

Ձեռքից բաց թողնելով ներկա առիթը, մենք կորցնում ենք ժողովրդի հոգևոր գանձերից ամենաարժեքավորը կյանքի վերակոչելու բարեպատեհ առիթը։

Արդ, ի՞նչ է իրենից ներկայացնում Զվարթնոցը, որի հոյակապ պատկերի հավերժացմանն ուղղված միջոցառումներ են ձեռնարկվել անցյալում, Բագրատունյաց թագավոր, իշխանաց իշխան Գագիկ Ա-ն մայրաքաղաք Անիում, 1001 թվականին, երբ լրանում էր քրիստոնեության ընդունման 700 տարին, կառուցեց Զվարթնոցի կրկնօրինակ սուրբ Գրիգոր եկեղեցին։ Նույնպիսի ձեռնարկման կարիք է զգացվում նաև այժմ։ Չէ՛ որ 2001 թվականին լրանում է քրիստոնեության ընդունման 1700 տարին։

Զվարթնոցի գովքն արել են ինչպես կառուցման ժամանակ, այնպես էլ հետագա դարերում շատ գործիչներ՝ Սեբեոս եպիսկոպոսը, կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Տարոնացի Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան Բարձրաբերդցին և ուրիշներ։ Մովսես

Կաղանկատվացին «զբազմապայծառ» անվանելով Զվարթնոցը, նաև հաղորդում է, որ Հոռոմոց թագավորը «… յաւերժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի զնոյնաձևն յարմարեսցե ի պալատանն»։

Ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանը գրում է. «Բյուզանդիան ունի աշխարհահռչակ մի ս. Սոֆիա, իսկ Հայաստանը նորա դեմ կանգնել է մի Զվարթնոց, որը բարձր գլուխ կպարծի իբրև ճարտարապետական գոհար բոլոր բյուզանդական շինությունների մեջ»։

Ա. Յակոբսոնը Զվարթնոցի մասին գրում է, որ այն «հայ դասական ճարտարապետության զարգացման ապաթեոզն էր, նրա ճարտարապետության նոր փուլը, օրինաչափական զարգացման ընթացքի հուշարձանը»։

Կասկածի կամ վիճարկման ենթակա չէ, որ հայ ճարտարապետության զարգացման գլխավոր գիծը 7-րդ դարի կեսերին անցել է Զվարթնոցով։ Զվարթնոցը հանդիսացել է իրեն նախորդած ողջ ժամանակաշրջանի ճարտարապետության տրամաբանական շարունակությունը, զարգացման թռիչքներից մեկը, նրա պսակը։

Նախքան Զվարթնոցը, քառախորանի թեման, որ Զվարթնոցի միջուկն է, շուրջ երկու հարյուր տարի մշակվում էր հայ ճարտարապետության շրջանակներում։ Ծավալատարածական հորինվածքի առումով եռաստիճան հորինվածքը, որպիսին Զվարթնոցն է, Հայաստանում առկա էր 7-րդ դարի սկզբներում, ի դեմս հանրահռչակ Բագարանի (624-631 թթ.)։ Նախքան Զվարթնոցը դեռևս առաջին դարից հայտնի էր սյունաշարը Գառնիում։

Ինչպես տեսնում ենք, Զվարթնոցում գործադրություն գտած ճարտարապետական բոլոր ձևերը կային մեզ մոտ։ Հետևաբար երբեմն լսվող որոշ նիհիլիստական արտահայտությունները պարզապես Զվարթնոցը մասնագիտորեն չուսումնասիրած Կլեյնբաուերի անհիմն տեսակետների արձագանք են։ Զվարթնոցի կառուցման տեղը պատահաբար չի ընտրվել։ Համաձայն ավանդության, այդտեղ են միմյանց հանդիպել Գրիգոր Լուսավորիչն ու թագավոր Տրդատը, որոնք էլ քրիստոնեություն հռչակել են Հայաստանի պետականորեն ճանաչված կրոն։ Զվարթնոցը Էջմիածնի հակակշիռը չի

եղել, կամ փորձ չի հանդիսացել նսեմացնելու Էջմիածնի համբավը։ Զվարթնոցը կառուցվել է այն ժամանակ, երբ հայոց կաթողիկոսությունը գտնվում էր ոչ թե Էջմիածնում, այլ Դվինում։ Եվ երբ մեծ երկրաշարժից կործանվում է Դվինի հոգևոր կենտրոնատեղին, կաթողիկոսությունը տեղափոխվում է լուսավորչավանդ Զվարթնոց։

Զվարթնոցը քաղկեդոնական եկեղեցի չի եղել։ Այն հանգամանքը, որ բյուզանդական կայսրը իր քսանհազարանոց զորքի ներկայությամբ 652 թ. եկեղեցու օծման ծեսին մասնակցեց, դեռ չի նշանակում, թե եկեղեցին քաղկեդոնական էր։ Եվ, վերջապես, այդ ժամանակների տեսական դոգմաները չէին վերաբերում եկեղեցու շինության տիպերին. նույն եկեղեցական շենքը տարբեր ժամանակներում սպասարկել է թե՛ լուսավորչական, թե՛ քաղկեդոնական համայնքներին։ Այդպիսին է եղել, օրինակ, զվարթնոցատիպ Բանակ տաճարը։

Ինչպես հայտնի է, առաջիկայում նոր եկեղեցի է կառուցվելու Սպիտակում։ Նման ցանկություն են հայտնել նաև այլ բնակավայրերի համայնքներ։ Արդ, ի՞նչ պիտի նրանց առաջարկվի, նո՞ր նախագիծ, թե՞ հնուց ավանդված, սրբագործված լավագույն օրինակների վերարտադրություն։ Մենք այժմ գտնվում ենք մի այնպիսի յուրօրինակ վիճակում, որ հնարավոր է կայացվի առաջին հայացքից ոչ տրամաբանական թվացող որոշում։ Բանն այն է, որ հայ ճարտարապետության շատ արժեքավոր հուշարձաններ, որոնք իրենց տեսակի մեջ եզակի են, գտնվելով մեր պատմական հայրենիքի տարածքում, անխնամ մնալու հետևանքով մեծ արագությամբ խարխլվում և կործանվում են։ Այժմ իրողություն է նրանց շատերի իսպառ անհետանալը երկրի երեսից։ Շատերը կործանվել են միտումնավոր կերպով՝ ջնջելու համար հայ քաղաքակրթության հետքերը։

9-11-րդ դարերում մեր արվեստը մեծ վերածննունդ ապրեց, ստեղծվեցին անբասիր կերտվածքներ։ Հետաքրքիր է, որ դրանց հիմքում առկա էր վաղ միջնադարի անուրանալի կնիքը, անսքող գործում էր հաջորդականության օրենքը։ Ժամանակները ինչ որ խորհրդով կրկնվում են։ Ինչպես երևում է, եկել է պահը նոր վերածնության։

Արդ խիստ այժմեական պետք է համարել Անիի ու պատմական Հայաստանի բոլոր բարձրարժեք հուշարձանները վերակերտել մեզ մոտ։ Եկել է ժամանակը սթափ նայելու իրավիճակին և հենց որ առիթն ու հնարավորությունը ներկայանում են, առանց ժամանակ կորցնելու, առանց ձգձգումների իրականացնել մեր երազանքը։

Հայտնի է, որ վարպետները Լենինականում կրկնել էին Անիի մայր տաճարը։ Այն դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժից կործանվեց։ Այդ եկեղեցին, իհարկե, կվերականգնվի, այս անգամ վարպետների ու ճարտարապետների համագործակցությամբ։ Նույն հաջողությամբ մենք կարող ենք Զվարթնոցը Երևանում վերականգնելուց բացի, վերականգնել-վերակրկնել Առաքելոց հինգգմբեթանի եկեղեցին Կիրովականում, Բախտագեղիկը՝ Չարենցավանում, Բագարանը՝ Աբովյանում, Հոնենցի եկեղեցին՝ Ստեփանավանում, Աբուհամրենցը՝ Սպիտակում, Խծկոնքի Սարգսի եկեղեցին՝ Լուսակերտում, Ամենափրկիչը՝ Եվրոպոլիսում և այլն։ Այսպես վարվելով մենք կկարողանանք այդ անկրկնելի կոթողները ապագային հանձնել կանգուն վիճակում։

Անցյալ աշնանը գործի տնօրենները Երևանի մայր տաճարի տարողությունը նշում էին 5000-ից ավելի նստատեղով և այդ հիման վրա հրաժարվեցին Զվարթնոցը կրկնելու գաղափարից։ Այդ թիվը աստիճանաբար փոքրացնելով, ի վերջո կանգ են առել 2000-ի վրա։ Այդ էլ մեծ թիվ է՝ ավելորդ ուռճացում, ինչպես վերջին տասնամյակներում բնորոշ է եղել մեր կյանքում հսկայամոլությունը, գիգանտոմանիան։ 2000 նստատեղով աղոթասրահը ս. Էջմիածնի աղոթարանից մեծ է յոթ անգամ։ Թվում է, թե ճիշտ կլիներ, եթե նոր եկեղեցում աղոթասրահի տարողությունը սահմանափակվեր 800-1000 նստատեղով, ինչպես և հոտնկայս տեղավորվեր ևս 800-1000 ունկնդիր։

Զվարթնոցում ազատորեն կարող են տեղավորվել ժամասացության 2000-2500 ունկնդիրներ։ Այս իրավիճակը մեզ իրավունք է տալիս կոչ անելու, որ դարձ կատարվի դեպի Զվարթնոցը կրկնելու առաջին որոշումը։ Այս դեպքում հնարավոր կլիներ

եկեղեցու կառուցման աշխատանքներն սկսել անմիջապես։ Նոր նախագծի ստեղծ-մանը 1-2 տարի հատկացնելը կարող է և ճակատագրական լինել։

Զվարթնոցի հարցի լուծումը առանձին անհատների իրավասությունից վեր է, այն պետք է տնօրինի ժողովուրդը։

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Հայրենիքի ձայն», 12 մայիսի 1990 թ.։